Իւանի» (արձ. 175)։ Հովհաննես առաջնորդը հյուրատանն է նվիրել Կոշաձորի այգին և «զՈռնագոմուց» կեսը։ Ուրիշ արձանագրություններից ևս երևում է, որ Հյուրատունը վանքից անկախ ունեցել է իր կալվածքները։ Այսպես, օրինակ, Սանահնի առաջնորդ տեր Հովհաննեսը 1222 թվականին Հյուրատանն է նվիրել Աստվածածնա ձորի այգին, ինչպես նաև տներ ու հողեր (արձ. 174), իսկ Վարդան քահանան 1275 թվականին գնել է Ատոմի այգին 375 սպիտակի և տվել է դարձյալ հյուրատանը (արձ. 128)։

14. Գյուղի աղբյուրը։ Բավական մեծ շինություն է և գտնվում է գյուղի արևմտյան կողմում։ Աղբյուրի շենքը թիկունքով հենված է սարալանջին, որտեղից ջուր է գալիս քարաշեն գետնուղիով, իսկ ճակատի կողմից աղբյուրի շենքը երկկամար մի սրահ է, որ կենտրոնից բաժանված է երկու թևի։ Սկզբում շենքի ամեն մի թևն ունեցել է իր երկթեք ծածկը, բայց վերջին նորոգության միջոցին Ճարտարապետական հուշարձանների պահպանության կոմիտեն ձևը փոխել և երկու թևի համար մի ընդհանուր երկթեք ծածկ է շինել։ Այս աղբյուրը կառուցված է հայոց ՉԴ (704+551=1255) թվականին, որի կառուցմանը հարյուր սպիտակ է նվիրել Մխիթար քահանան։

Սրանք են Սանահնի ճարտարապետական գլխավոր կառուցվածքները։

Նկատելով մեր ներկա աշխատության բնույթից, վանքի մյուս շինությունների կառուցման թվականների վրա կանգ չենք առնի, մանավանդ, որ նրանց վրայի բոլոր վիմական արձանագրություններն այստեղ հրատարակում ենք առանց բացառության։

Գլուխ Բ.

ԴՐՎԱԳՆԵՐ ՍԱՆԱՀՆԻ ՀՆԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Սանահնի վանքի հիմնադիր առաջնորդն եղել է Պոլիկարպոսը։ Այդ մասին տեղեկություն է պարունակում իր մեջ 972 թվականին Սանահնում գրված մի ձեռագիր մատյան, որ Բարսեղ Կեսարացու «Յաղագս ճգնաւորաց» գրքի ընդօրինակությունն է։

Նրա հիշատակարանում գրիչը խնդրում է հիշել նաև

«Զհանգուցեալ սուրբ հայրն մեր առ Քրիստոս Պաւղիկարպոս, որ սկիզբն արար վանիցս շինութեան» («Քոթուկ», էջ 39)։

Պոլիկարպոսը մեռել է այդ հիշատակարանը գրելուց երկու տարի առաջ, այսինքն 970 թվականին և նրան փոխարինել է «զՆորին փոխանորդ ուխտի առաջնորդս զհայրն Գրիգոր՝ մաքուր յոյժ և ամենայն առաքինի գործաւք լցեալ» («Քոթուկ», էջ 40)։

Սակայն, 972 թվականին, երբ արտագրվել է Բարսեղ Կեսարացու հիշյալ ձեռագիրը՝ «Ի Նորաշէն վանքս կոչեցեալ Սանահին», այդ ժամանակ վանքի վանահայրը Հովհաննեսն էր, և նրա հրամանով էլ այդ ձեռագիրն ընդօրինակվել է։ Նշանակում է, Գրիգորը շատ կարճ ժամանակ է եղել առաջնորդ և կամ, որ ավելի հավանական է, նա Հովհաննեսի աթոռակիցն է եղել։ Այդ եզրակացությանն ենք հանգում այն պատճառով, որ վերոհիշյալ հիշատակարանի մեջ Գրիգորի մահվան մասին ոչ մի խոսք չկա, թեև վանքի առաջնորդ է համարվում նաև Հովհաննեսը։

Հովհաննես վանահայրը, բացի վերոհիշյալ հիշատակարանից, մեզ ծանոթ է նաև Ասողիկի պատմությունից։

Վերջինս, խոսելով Սանահնի և Հաղբատի վանքերի հիմնարկության մասին, ավելացնում է՝

«և առաջնորդ Սանահնի՝ Յովհաննէս գիտնական այրն Աստուծոյ, իսկ Հաղբատայ՝ Սիմէոն ճգնազգեաց ծառայն Քրիստոսի»[1]։

Թեև Սանահնում Հովհաննես գիտնականի մասին վիմական արձանագրությունների մեջ ոչ մի տեղեկություն չի պահպանվել, բայց Հաղբատում Սիմեոն վանահոր անունը մնացել է վանքի ամենահին արձանագրությունների մեջ իբրև հիմնադիր՝ Տիրանուն երեցի հետ միասին։ Թե ինչու է Հովհաննեսը գիտնական մականունն ունեցել, մեզ ոչինչ հայտնի չի, բայց հավանաբար նա եղել է մի շարք գրքերի հեղինակ, որոնք մեզ չեն հասել։

[1] Ստեփաննոսի Տարոնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, բ տպ., ՍՊԲ, 1885, էջ 181։